Աշաղթ ըմ մնաց, Թոզ էջաւ, պրծաւ։

Դաւիթ ըսաց.—Մը վախանայ, իս Հալայ էստեղ սաղ կենդանի իմ։

—Հա՛յ, Թալան կենայ ձին, էսաց, իս իմ ձիու մանզիլ[1]) քիչ էր։

Ելաւ ժիւմ՝ էլ զգեորզ առից, ձին խեծաւ, կինաց, խասաւ Հալաբայ քեաղաք. Դաւիթ վեար ձիուն խեծուկ ի, ընդուցայ խառ [2]) էրաւ, զձին իլից[3]) քիշից, Հալաբայ քեաղքէն էկաւ, մե գիւրզ էլ էզար։ Քիւռիկ-Ջալալին էլ ըմ ոտ վիրուց մէկէլ տեղ, գեորզ դիպաւ խատ[4]) ոտը կշտին։ Թոզ ու դիւման արիկեական իրիս բռնից։

Էսաց.—Խազա՛ր ափսուս մե Թուլան Դաւիթ, շախիցինք, պախիցինք, մե խաց կուրուսըցինք,—խուղ էր, խուղ դարձաւ։

Դաւիթ էսաց.—Մը վախանայ, իս սաղ կենդանի էստեղ կանգնիր իմ։

Էսաց.—Հա՛յ, Թալան կենայ ձին, իմ ձիու մանզիլ քիչ էր։

Ձին խեծաւ, գիւրզ առից, կինաց. կինաց, Մսրայ քեաղաք խասաւ. քշից զձին, էկաւ, մէկ գեորզ էլ էզար. ինչ գեորզ էզար՝ Քիւռիկ-Ջալալին ոտ վիրուց, իտի մէկէլ տեղ, գեորզ դպաւ խատ ոտաց կշտին, Թոզ ու դիւման արիկեական իրիս բռնից։

Էսաց.—Ափսո՛ւս, խազա՛ր Հէֆ ափսուս մե Թուլան Դաւիթ· խուղ էր, խուղ դարձաւ։

Դաւիթ էսաց.—Մը վախանայ, իս էստեղ սաղ կենդանի իմ. քիւ ճար էրա, դեոր[5]) իմն ի։

Պրծաւ. դեոր խասաւ Դաւթին։

Կանչին մաջլիս[6])· բիրին, կիր կիրիցին՝ բեա՛լի, Մսրամելիք ուր ժէարբից պրծաւ, դեոր խասաւ Դաւթին։

Դաւիթն էսաց.—Դեոր որ խասաւ ընձը, մէկ դարբս տուիր իմ Աստըծուն խաթր, չըմ զարկի։

Մսրամելիքի մէր էկաւ, էսաց.—Դաւիթ, խոգիւդ արիւուդ

---

[1]) Ասպարէզ։ [2]) Մէկէլ, դարձեալ։ [3]) Վազեցնել, արագ քշել։ [4]) Իլից քշեց—շատ արագ քշել։ [5]) Հեռ, մօտ։ [6]) Հերթ, կարգ։ [7]) Խորհուրդ։